# ՀՈՒՍԻ ՃԱՆԱՊԱՐՀ-ի ՈՒՂԻՆԵՐԸ

ՀՈՒՍԻ ՃԱՆԱՊԱՐՀ
Way of HOPE
HOPE Armenia Ministries
www.wayofhope.am

Աշուն
2007
N 1


*«Ի՞նչ է հավատը եթե ոչ՝ հուսացված բաների հաստատումը եւ ապացույցն այն բաների, որոնք չեն երեւում»*
Եբրայեցիներ 1:11

## Սիրելի բարեկամ

«Հույս ճանապարհ» հասարակական կազմակերպությունը արդեն շուրջ երկու տարի է սկսել է իր գործունեությունը: Մեր նպատակն է աջակցել Հայ Առաքելական եկեղեցուն և ծրագրերն իրականացնել եկեղեցու հովանու ներքո:

Մենք ունենք երեք ուղղվածություն՝ ծրագրեր 12-17 տարեկան պատանիների համար, 18-ից բարձր երիտասարդների համար, ինչպես նաև կազմակերպում ենք սեմինարներ, որոնց ժամանակ խոսվում են կյանքի քրիստոնեական շատ սկզբունքների մասին: Տարվա ընթացքում կազմակերպում ենք նաև ուխտագնացություններ դեպի Հայաստանի տարբեր վայրերում գտնվող պատմական եկեղեցիներ:

«Հույս ճանապարհի-ի ուղիներ» թերթոնը կտպագրվի տարեկան չորս անգամ և այնտեղ կպատմվեն մեր ընթացիկ և ապագա ծրագրերի մասին:

Մենք սիրով հրավիրում և ակնկալում ենք ձեր մասնակցությունը:

***Տաթևիկ Ղազարյան***

*«Հույս ճանապարհ» երիտասարդական, կրթամշակութային հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն*



*Ուխտագնացություն Դիլիջան, (Հունիս 2007)*

*Դիլիջան կատարած ուխտագնացությանը մասնակցում էին պատանեկան և երիտասարդական ծրագրերի առաջնորդներն ու մասնակիցները: Հրավիրված էին նաև նոր երիտասարդներ, ովքեր ծանոթացան մեր ծրագրերին և նպատակներին, ինչպես նաև ցանկություն հայտնեցին մասնակցել:*

# 2006-2007 թթ. կատարված ծրագրերը



*Ս. Սահակ-Մեսրոպ երիտասարդական կրթահամալիրի պատանիները*

*Ես շատ եմ սիրում մեր պատանեկան ծրագիրը եւ նրա կազմակերպիչներին եւ խնդրում եմ Աստծուն, որ այն երկար շարունակվի:*

*Հայելի, 15 տարեկան*

*«Սուրբ Սահակ-Մեսրոպ» կենտրոնի եւ պատանեկան ծրագրի շնորհիվ շատ ընկերներ ձեռք բերեցի եւ շատ ուրախ եմ, որ այստեղ կարող եմ հոգեւոր գիտելիքներ ստանալ:*

*Արեն, 16 տարեկան*




*Պատանեկան ծրագիր թիվ 1 հատուկ դպրոց*

# Մասնակիցների Վկայություններ



*Ծաղկաձոր. երիտասարդական ծրագիր, (Նոյեմբեր 2006)*

«Մինչ այս ծրագրին հաճախելը ավելի քիչ բան գիտեի Աստծու եւ հոգեւոր կյանքի մասին: Հիմա ուրախ եմ, որ գտնվում եմ հոգեւոր միջավայրում»:

**Հարությունն**

Այս ծրագրի մտահղացումը շատ լավ է եւ կարողանում է օգնել երիտասարդներին մոտենալ Աստծուն»:

***Արման***



*Սևան. երիտասարդական ծրագիր, (Մայիս 2007)*

## Երիտասարդական ծրագիր

«Առաջին անգամ էի այսպիսի երիտասարդների շրջանում, ովքեր այդքան շատ սիրում ու հավատում են Աստծուն: Ես մի բան հասկացա, որ ամեն ինչ կորած չէ»:

***Վարսիկ***

«Նախքան ծրագրին մասնակցելը, ճիշտն ասած, կյանքից հիասթափված էի, ու ոչ մի բան չէի ուզում անել: Առաջին հանդիպումը մի կերպ անցկացրեցի, իսկ երկրորդից հետո չէի համբերում թե երբ էր գալու մյուսը: Ես շատ եմ փոխվել եւ իմ ընկերները կարող են հաստատել դա»:

***Լուսինե***

# Մեր Մոտակա Ծրագրերը

### Հոկտեմբեր - Դեկտեմբեր

- Ս. Սահակ-Մեսրոպ երիտասարդական կրթահամալիրում և թիվ 107 դպրոցում պատանեկան ծրագրեր:
- Երիտասարդական ծրագիր Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանում:

### Հոկտեմբեր

- Երկօրյա սեմինար չամուսնացածների համար:

### Նոյեմբեր

- Երկօրյա սեմինար երիտասարդների համար:

**Սիրով հրավիրում ենք ձեզ մասնակցելու վերոնշյալ ծրագրերին**

## Զույգերի սեմինար

«Շատ հետաքրքիր - կարեւոր էր մեզ համար: Կաշխատենք ճիշտ ապրել՝ իհարկե Աստծո օրհնությամբ»:

***Գոհար եւ Արմեն***



*Զույգերի սեմինար, (Մայիս 2007)*

## Չամուսնացածների սեմինար

«Այս երկու հրաշալի օրերը ստիպեցին ինձ մտածելու այնպիսի հարցերի մասին, որոնց մասին չէի մտածել, կամ էլ մտածել էի ոչ այնքան խոր»:

***Արմինե***



*Չամուսնացածների սեմինար, (Հունիս 2007)*

---


ՀՈՒՍՈ ՃԱՆԱՊԱՐՀ
Way of HOPE
HOPE Armenia Ministries
www.wayofhope.am

«Հուսո Ճանապարհ»
երիտասարդական կրթամշակութային
հասարակական կազմակերպություն

**www.wayofhope.am**

Հեռ./ ֆաքս (+37410) 55 34 38
Էլ. փոստ: staff@wayofhope.am

ՀՀ Երևան 0010
փոստարկղ 41
Չարենցի 28/6